



ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն, վարչական շենք, 2-րդ հարկ, հեռ.(223) 2-65-70, info\_hrazdan@aarhus.am

20.08.2014 B N 08/14

Կոտայքի մարզպետ Արամ Հարությունյանին  
Հրազդանի Օրհուս կենտրոնի  
Համակարգողներ Ա. Մնացականյանից և  
Ժ. Առաքելյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն մարզպետ,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ-ի կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի պահպանությունը, հասարակության իրազեկության բարձրացումը, խնդրում ենք Ձեզ՝ Հրազդանի Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն.

- 2014 թ. Կոտայքի մարզում իրականացվող բնապահպանական ծրագրերի վերաբերյալ
- Իրականացվող ծրագրերի բյուջեի վերաբերյալ

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում ենք՝ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության/30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում՝ խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն

Հրազդանի Օրհուս կենտրոնի համակարգող՝ Ժ. Առաքելյան

Ա. Մնացականյան